ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ԿԱԼԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Գործիք նրանց հայտնաբերման և ուժեղացված պաշտպանության տրամադրման համար

#IBELONG / ԵՍ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՄ

ԿԱԼԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ
Գործիք նրանց հայտնաբերման և ուժեղացված պաշտպանության տրամադրման համար

«Ամբողջ աշխարհում քաղաքացիություն չունեցող անձինք բախվում են ազատության և անվտանգության իրենց իրավունքի խախտումների հետ: Որոշ դեպքերում նրանք տարիներ շարունակ գտնվում են կալանքի մեջ ոչ թե այն պատճառով, որ հանցագործություն են կատարել, այլ զուտ նրա համար, որ նրանց թույլատրված չէ մնալ տվյալ երկրում, և նրանք գնալու այլ տեղ չունեն: Եթե պետությունները չեն ճանաչում քաղաքացիություն չունեցող անձանց և չեն ընդունում նրանց պաշտպանական կարիքները, նման անձինք գտնվում են շարունակական և երկարատև կալանքի վտանգի տակ: Կարևոր է, որ պետությունները կանխեն և դադարեցնեն մարդու իրավունքների այս լուրջ խախտումները»:

Ֆիլիպպո Գրանդի,

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

2017 թվականի հունիս

Շապիկի լուսանկարը՝ Տրանզիտ գոտի սահմանի հատման կետում Եվրոպայում

ՄԱԿ ՓԳՀ/Մ. Հուբերլանթ/ 2016 թվականի սեպտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը 6

Ներգաղթի համակարգում կալանավորմանն առնչվող միջազգային չափորոշիչներ 6

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10

III. ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ ԿԱԼԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ 13

Այցելության նախապատրաստումը 13

Այցելության ընթացքում 16

IV. ՀԵՏԱԳԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՆ ԱՅՑԵԼԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՁԵՌՆԱՐԿՎԵԼԻՔ ՔԱՅԼԵՐ 24

Ստուգել հնարավոր ապաքաղաքացիությունը կամ քաղաքացիությունը 25

Բողոքարկել կալանավորման մասին որոշումը 25

Աջակցել ազատ արձակմանը հաջորդող լուծմանը 27

Սատարել փոփոխությունները օրենքում, քաղաքականության մեջ և պրակտիկայում 29

ՀԵՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 30

Ապաքաղաքացիություն 30

Կալանավորում 31

Ապաքաղաքացիություն և կալանավորում 33

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գործնական փաստաթուղթը մշակվել է կալանավորման համատեքստում այն անձանց ճանաչելու նպատակով, ովքեր կարող է քաղաքացիություն չունենան, ինչպես նաև վերջիններիս դժվար դրությունից հանելուն ուղղված լուծումներ գտնելու համար: Այս գործիքը կարող է օգտագործվել քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչելու համար, նախքան կալանավորելու մասին որոշման կայացումը, երբ հաշվի են առնվում ազատ արձակումը համայնքում կամ ուղղորդումը դեպի կալանավորման այլընտրանք, կամ կալանավորելու մասին որոշման կայացումից հետո: Այն նախատեսված է գործող իրավաբանների, որոշում կայացնողների և գործ վարողների համար, ովքեր այցելում են կալանքի վայրեր կամ այլ կերպ ներգրավված են ապաստանի տրամադրման և միգրացիոն գործընթացին, այդ թվում՝ դատավորների, սահմանապահ ծառայության աշխատակիցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատողների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) աշխատակազմի, ազգային կանխարգելիչ մեխանիզմների[1], մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային հաստատությունների, մարդու իրավունքների պաշտպանների և կալանավորումը (ներգաղթը) մշտադիտարկող այլ ազգային կամ միջազգային կազմակերպությունների համար:

Ապաքաղաքացիությունը, որպես կանոն, խստորեն սահմանափակում է հիմնական ինքնությունը հաստատող և ճամփորդական փաստաթղթերի հասանելիությունը, որոնք սովորաբար ունենում են քաղաքացիները: Ավելին, քաղաքացիություն չունեցող անձինք հաճախ օրինական բնակության իրավունք չեն ունենում որևէ երկրում: Քանի որ քաղաքացիություն չունեցող անձինք սովորաբար չունեն ինքնությունը հաստատող փաստաթղթեր կամ վավերական բնակության թույլտվություններ, նրանք կարող են ենթարկվել ձերբակալման և շարունակական ու երկարատև կալանքի մեծ ռիսկի: Այն իրավիճակներում, երբ նրանք կալանավորվում են իրենց ծագման երկրից դուրս, նրանց կարող է սպառնալ նաև երկարատև կալանք, քանի որ նրանք ի վիճակի չեն վերադառնալ իրենց ծագման երկիր: Ինչևէ, փաստաթղթավորված չլինելը կամ անհրաժեշտ ներգաղթի կամ բնակության թույլտվություն չունենալը չի կարող

[1] Ազգային մակարդակում խոշտանգումների կանխարգելմանն ուղղված ազգային կանխարգելիչ մեխանիզմները (ԱԿՄ-ներ) սահմանվում կամ հաստատվում են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ Կոնվենցիայի Կամընտրական արձանագրության անդամ պետությունների կողմից: Նրանք լիազորված են կանոնավոր կերպով ստուգելու ազատությունից զրկված անձանց նկատմամբ կալանքի վայրերում ցուցաբերվող վերաբերմունքը և առաջարկություններ ներկայացնելու համապատասխան մարմիններին ազատությունից զրկված անձանց հանդեպ վերաբերմունքը և պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով:

օգտագործվել որպես քաղաքացիություն չունեցող անձանց կալանավորման ընդհանուր արդարացում[2]: Կալանքի մեջ գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչումն այդ իսկ պատճառով կարևոր է միգրացիոն և ապաստանի տրամադրման գործընթացի բոլոր փուլերում: Քանի որ հատկապես քաղաքացիություն չունեցող անձինք են ենթարկված երկրարատև կալանավորման ռիսկին, ապաքաղաքացիության ճանաչումը պետք է համարվի այլ խոցելիությունների ճանաչման մաս: Պետք է նախապատվություն տալ համայնքում ազատ արձակմանը կամ դեպի կալանավորման համապատասխան այլընտրանքներ ուղղորդմանը:

#ԵՍ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՄ

2014 թվականի նոյեմբերի 4-ին ՄԱԿ ՓԳՀ-ն մեկնարկեց մինչև 2024 թվականը ապաքաղաքացիությանը վերջ դնելուն ուղղված #Ես պատկանում եմ քարոզարշավը: #Ես պատկանում եմ քարոզարշավի նպատակներին հասնելու նպատակով Ապաքաղաքացիությանը վերջ դնելուն ուղղված գործողությունների 2014-2024թթ. համաշխարհային ծրագիրը սահմանում է ուղեցույց շրջանակ, որը բաղկացած է ՄԱԿ ՓԳՀ-ի և այլ շահառուների աջակցությամբ Պետությունների կողմից ձեռնարկվելիք 10 գործողություններից: Գործողությունների համաշխարհային ծրագիրը նախատեսված է լուծում տալու ապաքաղաքացիության գոյություն ունեցող խոշոր իրավիճակներին և կանխելու նոր դեպքերի զարգացումը[3]:

UNITED COLORS OF BENETTON-ի հետ համագործակցությամբ

Այս գործիքը կաջակցի քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչելուն առաջին ստուգման ընթացքում անցկացվելիք հարցազրույցների միջոցով կամ անկանոն մուտքի, տարածքում անօրինական ներկայության կամ վերադարձի համատեքստում տեղի ունեցած կալանավորման ժամանակ: Մինչդեռ դեպքերի մեծամասնությունում անկանոն մուտքը կամ կացությունը համարվում է վարչական իրավախախտում կամ ներգաղթի կանոնների խախտում, որոշ երկրներում, հակառակ մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին, այն կարող է համարվել քրեական իրավախախտում, և

[2] Տես UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, 30 June 2014, Para. 112-115, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ http://www.refworld.org/docid/53b676aa4.html:
[3]#Ես պատկանում եմ քարոզարշավի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ http://www.unhcr.org/ibelong:

քաղաքացիություն չունեցող անձինք այդպիսով կարող են ենթակա լինել քրեական արդարադատության համակարգին:

Կարևոր է նաև ճանաչել այն քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր դատապարտվել են և կալանավորվել իրենց ներգաղթային կարգավիճակի հետ կապ չունեցող հանցագործությունների համար, քանի որ դատավորները պայմանական ազատ արձակումը սովորաբար պայմանավորում են ինքնություն հաստատող փաստաթղթերով, որոնք քաղաքացիություն չունեցող անձանց մոտ հաճախ բացակայում են: Նման անձինք նաև ենթարկված են ներգաղթի հետ կապված անորոշ կալանքի ռիսկին, հենց որ քրեական կալանքը մոտենա ավարտին:

ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը

Քաղաքացիություն չունեցող անձինք ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկան են՝ համաձայն վերջինիս՝ ապաքաղաքացիությանն առնչվող մանդատին, որը ներառում է քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչումն ու պաշտպանությունը, ինչպես նաև ապաքաղաքացիության կանխարգելումը և կրճատումը[4]: Կազմակերպության խնդրո առարկա անձանց արդյունավետ պաշտպանել և աջակցել կարողանալու նպատակով կարևոր է, որ ՄԱԿ ՓԳՀ-ի համար ապահովվի ապաստան հայցողների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց արագ և անխոչընդոտ հասանելիություն, որպեսզի այն կարողանա աջակցել վերջիններիս բարեկեցությանը, որտեղ էլ որ նրանք լինեն, այդ թվում՝ երբ նրանք կալանավորված են[5]: Սա ենթադրում է մուտքի հնարավորություն և այցելություններ կալանքի վայրեր, ինչպես նաև աջակցություն ազգային մարմիններին կալանքի պայմանները բարելավելու հարցում և կալանավորման այլընտրանքներ հուշելու միջոցով: Դա կարող է նաև ներառել միջամտություն ինչպես անհատական դեպքերում, այնպես էլ ողջ համակարգի թերությունների հետ կապված:

Ներգաղթի համակարգում կալանավորմանն առնչվող միջազգային չափորոշիչներ

Միջազգային իրավական նորմերը պաշտպանում են յուրաքանչյուր անձի ազատության և անվտանգության իրավունքը: Ներգաղթի հետ կապված

[4] Conclusion on Identification, Prevention and Reduction of Statelessness and Protection of Stateless Persons No. 106 (LVII) – 2006, Executive Committee 56th session. Contained in United Nations General Assembly document A/AC.96/1035, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/453497302.html:
[5] Տես, օրինակ, Executive Committee Conclusion Nos. 44(XXXVII) – 1986 – Detention of Refugees and Asylum-Seekers, (f), (g); 46(XXXVIII) – 1987, (f); 47 (XXXVIII) – 1987, (f); 50 (XXXIX) – 1998, (i); 85 (XLIX) – 1988, (dd); 106 (LVII) – 2006 (on stateless persons), (w).

նպատակներով կալանավորումը պետք է տեղի ունենա միայն որպես բացառիկ միջոց, երբ անհրաժեշտ և խելամիտ է յուրաքանչյուր անհատական դեպքում: Այն պետք է նաև համաչափ լինի օրինական նպատակին և տեղի ունենա միայն այն բանից հետո, երբ պարզվում է, որ առկա չեն կամ տեղին չեն պակաս հարկադրական կամ անձանց մասնավոր կյանքին միջամտող միջոցներ[6]: Կալանավորման այլընտրանքների դիտարկումը նույնպես ապահովում է, որ քաղաքացիություն չունեցող անձի, ապաստան հայցողի կամ գաղթականի առանձնահատուկ հանգամանքների լույսի ներքո կալանավորումը հանդես գա որպես իսկապես վերջին միջոց:

Բոլորն ունեն ազատության և անձի անվտանգության իրավունք: Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալության կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի իր ազատությունից, բացի այն դեպքերից, երբ դա արվում է օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Հոդված 9. Անձի ազատությունը և անվտանգությունը. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագիր

Ապաքաղաքացիության կամ այլ խոչընդոտների պատճառով անհատի արտաքսումն իրականացնելու Անդամ պետության անկարողությունը չի արդարացնում անորոշ կալանքը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի Հոդված 9-ի վերաբերյալ Թիվ 35 ընդհանուր մեկնաբանություն

Երբ անհատի ինքնությունը հաստատված չէ կամ վիճարկվում է ինքնության նախնական ստուգման համատեքստում, կալանավորմանը դիմելը կարող է համարվել օրինական, ենթակա պայմանների և երաշխիքների: Քաղաքացիության որոշումը կարող է ներառված լինել նման ստուգման մեջ: Ինքնության նման նախնական ստուգումները թույլատրելի է իրականացնել կալանքի նվազագույն ժամկետներում, սակայն այսպիսի միջոցները պետք է համապատասխանեն միջազգային չափորոշիչներին և տևել այնքան ժամանակ, քանի դեռ գործադրվում են խելամիտ ջանքեր անհատի

[6] Տես UNHCR, Guidelines on the Applicable Criteria and Standards relating to the Detention of Asylum-Seekers and Alternatives to Detention, 2012, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/503489533b8.html, (UNHCR Detention Guidelines) and Policy on Detention Monitoring, 3 December 2015, UNHCR/HCP/2015/7, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/564199b54.html:

ինքնությունը հաստատելու ուղղությամբ, ինչպես նաև օրենքով սահմանված խիստ սահմանափակ ժամկետներում[7]: Ըստ *Ապաստան հայցողների կալանավորմանն առնչվող կիրառելի չափանիշների և չափորոշիչների և Կալանավորման այլընտրանքների վերաբերյալ Ուղեցույցի (Կալանավորման վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույց)* ՝ կալանավորումը հետևաբար պետք է ենթակա լինի նվազագույն ընթացակարգային երաշխիքների[8]: Կալանքի՝ այս նախնական ժամկետից ավել երկարաձգումը զուտ այն հիմքով, որ անհատի քաղաքացիությունը կամ ինքնությունը որոշված չէ, հակասում է միջազգային չափորոշիչներին և պետք է համարվի կամայական: Ինքնության կամ քաղաքացիության ստուգման պատշաճ մեխանիզմների բացակայությունը կարող է հանգեցնել երկարաձգվող կամ անորոշ կալանքի և կարող է, մասնավորապես, ազդել քաղաքացիություն չունեցող անձանց վրա[9]:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ

Միջազգային իրավական նորմերը արգելում են կալանավորումը կամ անձի տեղաշարժման ազատության սահմանափակումը ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, ծննդի կամ այլ կարգավիճակի հիման վրա:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի Հոդված 2

Այս միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ ՄԱԿ ՓԳՀ-ն 2014 թվականին մեկնարկել է *Կալանավորման դեմ համաշխարհային ռազմավարությունը (2014-2019)*[10], որը հնգամյա նախաձեռնություն է, որի նպատակն է աջակցել Պետություններին վերջ դնել ապաստան հայցողների և փախստականների կալանավորմանը և, մասնավորապես, վերջ տալ երեխաների կալանավորմանը: ՄԱԿ ՓԳՀ-ի Համաշխարհային ռազմավարության մաս է կազմում այնպես անել, որ օրենքով նախատեսված լինեն և գործնականում կիրառվեն կալանավորման այլընտրանքներ:

---

[7] Տես UNHCR Detention Guidelines, Para. 24, 25 and 26:

[8] Տես UNHCR Detention Guidelines, Para. 47:

[9] Տես նաև UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 112 – 115:

[10] Տես UNHCR, Beyond Detention: A Global Strategy to support governments to end the detention of asylum-seekers and refugees, 2014-2019, 2014, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/536b564d4.html: Կալանավորման դեմ համաշխարհային ռազմավարության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ http://www.unhcr.org/detention:

Կառավարությունների համար հրատարակված երկու *Տարբերակների վերաբերյալ փաստաթղթերում*[11] բերված են ընդունելության տարբերակների և կալանավորման այլընտրանքների ավելի քան երեսուն օրինակներ: Այս օրինակները կարևոր են կառավարությունների համար, որոնք շահագրգռված են երկարատև լուծումներ գտնելու քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Երեխաները չպետք է կալանավորվեն ներգաղթի հետ կապված նպատակներով՝ անկախ իրենց կամ իրենց ծնողների իրավական/ներգաղթային կարգավիճակից, և կալանավորումը երբեք չի բխում նրանց շահերից: Համապատասխան խնամքի կազմակերպում և համայնքահեն ծրագրեր պետք է գործեն, որպեսզի ապահովվի երեխաների և նրանց ընտանիքների պատշաճ ընդունելությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը միգրացիայի համատեքստում փախստական և գաղթական երեխաների կալանավորման վերաբերյալ, 2017 թվականի հունվար[12]

Այս գործիքը պետք է ընթերցել *«Ներգաղթի հետ կապված կալանավորման մշտադիտարկում. Գործնական ուղեցույց»*[13] փաստաթղթի հետ միասին, որն առաջարկում է կալանավորման մշտադիտարկման իրականացման գործնական մեթոդաբանություն, որի նպատակն է ապահովել կալանքի պայմանների համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի *Կալանավորման մշտադիտարկման քաղաքականությանը*[14]:

Այս գործիքը կարող է օգտագործվել մի շարք վայրերում, որոնք ծառայում են որպես կալանքի վայրեր, այդ թվում՝ բայց ոչ միայն ներգաղթի հետ կապված կալանքի սահմանված կենտրոններում, հեռացման կամ տրանզիտ կենտրոններում, փակ ընդունելության կամ փաստաթղթավորման կենտրոններում, օդանավակայաններում, նավահանգիստներում, տարանցիկ և «միջազգային գոտիներում», նավահանգստային

[11] Տես UNHCR, Options Paper 1: Options for governments on care arrangements and alternatives to detention for children and families, 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/5523e8d94.html և UNHCR, Options Paper 2: Options for governments on open reception and alternatives to detention, 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/5523e9024.html:

[12] Տես UNHCR, UNHCR's position regarding the detention of refugee and migrant children in the migration context, January 2017, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/5885c2434.html:

[13] Տես UNHCR, Association for the Prevention of Torture (APT) and the International Detention Coalition (IDC), Monitoring Immigration Detention: Practical Manual, 2014, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/53706e354.html:

[14] Տես UNHCR, Policy on Detention Monitoring, 3 December 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/564199b54.html:

շինություններում, կղզիներում, մեքենաներում, ինքնաթիռներում, մարդատար և այլ նավերում, բանտերում, ոստիկանական բաժանմունքների ձերբակալավածների պահման վայրերում կամ ոստիկանական բաժանմունքներում, ռազմաբազաներում, բժշկական հաստատություններում և հոգեբուժարաններում կամ ցանկացած այլ վայրում, որտեղ մարդիկ ֆիզիկապես զրկված են իրենց ազատությունից՝ երգաղթի հետ կապված կամ քրեական նպատակներով:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիություն չունեցող անձ

Քաղաքացիություն չունեցող անձը սահմանվում է որպես անձ, ով որևէ պետության կողմից չի համարվում իր քաղաքացին՝ համաձայն այդ պետության օրենքի[15]: Քաղաքացիություն չունեցող անձինք պաշտպանված են Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայով: Ապաքաղաքացիության պատճառ կարող են լինել մի շարք գործոններ, ինչպես օրինակ՝ ազգային օրենսդրության և օրենքների գործնական կիրառության ոլորտում առկա խտրականությունը (օրինակ՝ ռասայական պատկանելության, կրոնի կամ սեռի վրա հիմնված), հակասությունները և բացերը քաղաքացիության վերաբերյալ օրենքներում և պետական ժառանգորդությունը:

Քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչման համապատասխան մեխանիզմների բացակայության պայմաններում անհատները կարող են գրանցվել այնպիսի խմբերում, ինչպես օրինակ՝ «անհայտ քաղաքացիություն», «չորոշված քաղաքացիություն» կամ «հաստատվելիք քաղաքացիություն» ունեցող անձինք կամ քաղաքացիություն չունեցող անձանց որոշակի խմբերի համար սահմանված հատուկ կարգերում: Մինչդեռ յուրաքանչյուր երկիր և հաստատություն ունի տարբեր ընկալում այն բանի, թե ով է գրանցված այս կարգերում, հարկավոր է հատուկ ուշադրություն հատկացնել դրանց, քանի որ դրանք կարող են ներառել քաղաքացիություն չունեցող անձանց:

Ապաքաղաքացիության ռիսկ

[15] Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիայի (1954թ. Կոնվենցիա) Հոդված 1: Այս սահմանումը ճանաչված է որպես սովորութային միջազգային իրավունք, ուստի կիրառելի է նույնիսկ այն պետությունների նկատմամբ, որոնք 1954 թվականի Կոնվենցիայի անդամ չեն: Տես Convention relating to the Status of Stateless persons, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/3ae6b3840.html և UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 18-56:

Հաջորդիվ ներկայացված է այն անձանց ոչ սպառիչ ցուցակը, ովքեր կարող են գտնվել ապաքաղաքացիության ռիսկի տակ այն պատճառով, որ պատկանում են հետևյալ խմբերից մեկին կամ մի քանիսին. Անձինք, ովքեր ապրում են սահմանային շրջաններում, որտեղ ծնունդների գրանցման, քաղաքացիական գրանցման և ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայությունը կարող է հանգեցնել շփոթմունքի՝ կապված այն բանի հետ, թե արդյոք նրանք այս կամ այն պետության քաղաքացի են, թրաֆիքինգի զոհեր են, փոքրամասնության ներկայացուցիչներ են և անձինք են, ովքեր ենթադրյալ կամ իրական կապեր ունեն օտար պետությունների հետ, քոչվոր կամ կիսաքոչվոր բնակչության ներկայացուցիչներ են, ում տարածքները հատում են միջազգային սահմաններ, ինչպես նաև գաղթականներ և փախստականներ են, որոնց դեպքում ծագման երկրի քաղաքացիությունը ապացուցելու դժվարությունը կարող է լինել այն բանի արդյունք, որ հետնորդների մեկ կամ մեկից ավելի սերունդներ ծնվել են արտասահմանում, մի դժվարություն, որը պոտենցիալ կերպով աճում է յուրաքանչյուր հաջորդ սերնդի հետ: Բացի այդ, ծնունդների գրանցման բացակայությունը կարող է մարդկանց ենթարկել ապաքաղաքացիության ռիսկի, քանի որ ծննդյան վկայական է ապացույց է ներկայացնում այն մասին, թե որտեղ է անձը ծնվել, և ովքեր են նրա ծնողները, ինչը կարևոր տեղեկատվություն է, որն անհրաժեշտ է քաղաքացիության հաստատման համար[16]:

Քաղաքացիություն չունեցող փախստական

Քաղաքացիություն չունեցող անձը նույնպես կարող է համապատասխանել փախստականի սահմանմանը[17]: Այդ դեպքում քաղաքացիություն չունեցող փախստականը պաշտպանված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով, և նրա հետ պետք է վարվել՝ համաձայն փախստականներին առնչվող միջազգային նորմերի: Այնուամենայնիվ, կարևոր է փորձել լուծում տալ անձի ապաքաղաքացիությանը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ փախստականի կարգավիճակը դադարում է՝ առանց անձի՝ քաղաքացիություն ստանալու, ինչն այդ

[16] Տես UNHCR, Action to Address Statelessness: A Strategy Note, March 2010, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/4b9e0c3d2.html:

[17] Փախստական է համարվում այն անձը, ով ռասայական պատկանելության, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների պատճառով հալածանքի հիմնավորված երկյուղ կրելու կապակցությամբ գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ այդպիսի երկյուղի պատճառով անհոժար է օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին սովորական բնակության երկրից դուրս, անկարող է կամ այդպիսի երկյուղի պատճառով անհոժար է այնտեղ վերադառնալ: Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի Հոդված 1: Տես Convention relating to the Status of Refugees, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unhcr.org/3b66c2aa10:

դեպքում անհրաժեշտ է դարձնում որպես քաղաքացիություն չունեցող անձ պաշտպանությունը: Ավելին, փախստականի ապաքաղաքացիությունը կարող է հետևանքներ ունենալ ինչպես իր, այնպես էլ նրա երեխաների համար:

Կալանավորում

Այս գործիքի համատեքստում «կալանավորումը» վերաբերում է ազատությունից զրկելուն կամ փակ տարածքում պահելուն, որն անձին արգելված է իր կամքով լքել, այդ թվում՝ բայց ոչ միայն բանտերում կամ հատուկ նպատակով կառուցված կալանքի, փակ ընդունելության կամ անձանց պահման կենտրոններում կամ հաստատություններում: Կալանքի վայրը կարող է կառավարվել կա՛մ պետական մարմինների, կա՛մ մասնավոր կապալառուների կողմից, իսկ ազատությունից զրկելը կարող է թույլատրվել վարչական կամ դատական ընթացակարգով: Անձը կարող է կալանավորվել «օրինական» թույլտվությամբ կամ առանց դրա[18]:

Կամայական կալանավորում

Միջազգային չափորոշիչների համաձայն՝ «կամայականությունը» պետք է մեկնաբանել լայն իմաստով՝ ներառելով ոչ միայն անօրինականությունը, այլև անհամապատասխանության, անարդարության տարրերը և կանխատեսելիության բացակայությունը: Պարտադիր կամ ավտոմատ կալանավորումը կամայական է, քանի որ այն հիմնված չէ կոնկրետ տվյալ դեպքում կալանավորման անհրաժեշտության քննության վրա: Կալանավորումը կամայական է, երբ այն օրինական չէ, երբ դրան դիմում են առանց օրինական նպատակի, երբ այն գերազանցում է խելամիտ ժամկետը, կամ երբ հաշվի են չեն առնվել կոնկրետ տվյալ դեպքում առկա կամ տեղին նվազ հարկադրական կամ անձի ազատության նկատմամբ ոտնձգողական միջոցներ (որպես կալանավորման այլընտրանքներ): Դատարանները սովորաբար հաշվի են առնում հետևյալ լրացուցիչ չափանիշները կալանավորման կամայականությունը գնահատելիս. Կալանքի պայմանները, կալանքի երաշխիքները, ինչպես օրինակ՝ անկախ պարբերական վերստուգումների գոյությունը և կալանքի ընթացքում արդյունավետ լուծման հասանելիության առկայությունը[19]:

Կալանավորման այլընտրանքներ

---

[18] Տես UNHCR Detention Guidelines, page 9:

[19] Տես UNHCR Detention Guidelines 3, 4 և 6:

«Կալանավորման այլընտրանքները» վերաբերում է ցանկացած օրենսդրության, քաղաքականության կամ պրակտիկայի, որը թույլ է տալիս անձանց բնակվել համայնքում՝ ենթարկվելով իրենց տեղաշարժման ազատության վրա դրված մի շարք սահմանափակումների և պայմանների: Կալանավորման այլընտրանքները չպետք է դառնան կալանավորման այլընտրանքային ձևեր, ինչպես նաև չպետք է դառնան ազատ արձակման այլընտրանքներ: Դրանք պետք է հարգեն նվազագույն միջամտության սկզբունքը և մեծ ուշադրություն դարձնեն հատկապես խոցելի խմբերի դրությանը: Քաղաքացիություն չունեցող անձանց համար առաջին տարբերակը միշտ ազատությունն ու ազատ տեղաշարժման իրավունքն են:

III. ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ ԿԱԼԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետևյալ ուղղորդող հարցերը կարող են տրվել կալանքի մեջ գտնվող անձի հետ շփվելու տարբեր փուլերում: Այդ փուլերը կարող են ներառել այցելության նախապատրաստական կամ դրան հաջորդող փուլը, անհատի հետ հարցազրույցները այցելությունների ընթացքում և կանոնավոր երկխոսությունը իշխանությունների հետ: Ոչ բոլոր հարցերը կիրառելի կլինեն անհատի իրավիճակում, և որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել ավելի քան մեկ հարցազրույց: Եթե այցելող կողմը ի վիճակի չէ բազմաթիվ այցելություններ նախաձեռնել, **շագանակույն և թավատառ** գրված ուղղորդող հարցերի պատասխանները կարող են օգնել առաջին քայլը կատարելու այն անձանց ճանաչման ուղղությամբ, որոնք կարող են չունենալ քաղաքացիություն:

Այցելության նախապատրաստումը

Կալանքի կենտրոն այցելություն նախապատրաստելու համար, որտեղ կարելի է գտնել անձանց, ովքեր, հնարավոր է, քաղաքացիություն չունենան, հարկավոր է հաշվի առնել ապաքաղաքացիության հետ կապված հետևյալ հարցերը.

- ✓ Երկիրը Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայի (1954 թ. Կոնվենցիա) անդամ պետությո՞ւն է[20]:

[20] Եթե պետությունը 1954 թվականի Կոնվենցիայի անդամ է, քաղաքացիություն չունեցող անձն ունի մի շարք իրավունքներ, այդ թվում՝ վարչական աջակցության իրավունք (Հոդված 25), ինքնությունը հաստատող և ճամփորդական փաստաթղթեր ունենալու իրավունք (Հոդվածներ 27 և 28) և ազատում է նրանց փոխադարձ պահանջներից (Հոդված 7): 1954 թվականի Կոնվենցիան քաղաքացիություն չունեցող անձանց համար որևէ կոնկրետ պետության քաղաքացիություն ստանալու իրավունք չի նախատեսում:

- ✓ Երկիրն ունի՞ ապաքաղաքացիության որոշման գործող ընթացակարգ: Եթե այո, ո՞վ է պատասխանատու այդ ընթացակարգի իրականացման համար: Երկիրն արտակա կերպով ճանաչո՞ւմ է ապաքաղաքացիությունը որպես պաշտպանության հիմք և տալի՞ս է բնակության թույլտվություն: Եթե ոչ, երկիրը դեպի ՄԱԿ ՓԳՀ ուղղորդո՞ւմ է այն անձանց, ովքեր, հնարավոր է, քաղաքացիություն չունենան:
- ✓ Եթե ոչ, ուրիշ ի՞նչ ճանապարհներից են օգտվում քաղաքացիություն չունեցող անձինք պաշտպանությունից օգտվելու համար: (Դիտարկեք այնպիսի գործոններ, ինչպիսիք են վարչական կամ դատական ընթացակարգերը, որոնց նպատակն է կանոնակարգել նրանց կացությունը մարդասիրական հիմքերի, փախստականի կարգավիճակի, օժանդակ պաշտպանության, հանդուրժելի կացության հիման վրա և այլն):

Հարկավոր է քննության առնել նաև ներգաղթի հետ կապված կալանավորման ընդհանուր շրջանակը: ՄԱԿ ՓԳՀ-ի Կալանավորման ստուգացանկը մի գործիք է, որը կարող է օգնել կալանավորմանն առնչվող օրենսդրական շրջանակը, քաղաքականությունը և պրակտիկան հասկանալու հարցում[21]: Հատկապես կարևոր են նշված ստուգացանկի հետևյալ հարցերը.

- ✓ Ի՞նչ միջազգային, տարածաշրջանային և ազգային օրենսդրություն է կիրառելի ներգաղթի հետ կապված կալանավորման նկատմամբ:
- ✓ Համաձայն օրենքի՝ սահմանափակում ունի՞ կալանքի առավելագույն ժամկետը[22]:
- ✓ Ազգային օրենսդրությունը նախատեսո՞ւմ է, որ կալանավորման մասին նախնական որոշմանը համակարգված կերպով հաջորդի դատական կամ անկախ վարչական մարմնի կողմից կայացված ազատ արձակման կամ

Ինչևէ, քանի որ քաղաքացիություն չունեցող անձինք որևէ պետություն չունեն, որը կպաշտպաներ իրենց, Կոնվենցիան պահանջում է, որ անդամ պետությունները հնարավորինս հեշտացնեն քաղաքացիություն չունեցող անձանց ինտեգրումն ու հպատակագրումը, օրինակ՝ քաղաքացիություն չունեցող անձանց համար արագացնելով հպատակագրմանն առնչվող վարույթը և կրճատելով դրա հետ կապված ծախսերը: 1954 թվականի Կոնվենցիայում նաև ներակա կերպով նշվում է, որ պետությունները պետք է ճանաչեն քաղաքացիություն չունեցող անձանց, որպեսզի համապատասխան կերպով վարվեն նրանց հետ, այդ թվում՝ նրանց համար ապահովեն ապահով բնակություն և մի շարք իրավունք: Ապաքաղաքացիության որոշման ընթացակարգը դա անելու մեխանիզմ է:

[21] Տես Annex 3 of UNHCR, Progress Report mid-2016. Beyond Detention: A Global Strategy to support governments to end the detention of asylum-seeker and refugees, 2014-2019, August 2016, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/57b850dba.html:

[22] Եթե օրենքով դեռևս սահմանված չէ կալանքի առավելագույն ժամկետի սահմանափակում, կարելի է հղում կատարել նախադեպային իրավունքին:

կալանավորման մասին որոշումը: Ո՞րն է այս նախնական վերստուգման ժամանակացույցը:

- ✓ Ազգային օրենսդրությունը նախատեսո՞ւմ է, որ կալանավորման մասին որոշումը ենթակա լինի պարբերական վերանայման: Եթե այո, ո՞ր մարմինն է պատասխանատու կալանավորման վերանայման համար, և ինչպիսի՞ն է այդ վերանայումների հաճախականությունը:
- ✓ Գործնականում ո՞րն է կալանավորման մասին որոշումների վերանայման ընթացակարգը: Վերանայումն իրականացվում է ավտոմա՞տ կերպով, թե՞ անհրաժեշտ է դիմել դրա համար: Այն անհատականացվա՞ծ է: Ի՞նչ հաճախականությամբ են տեղի ունենում նման վերանայումները:
- ✓ Ազգային օրենսդրությունը անհատների համար դատարանում կալանավորման մասին որոշումը բողոքարկելու իրավունք նախատեսո՞ւմ է: Նման բողոք ներկայացնելու իրավունքը գործնականում գործո՞ւմ է[23]:
- ✓ Անկանոն դրության մեջ գտնվող օտարերկրացիներին համակարգված կերպով վերցնո՞ւմ են ներգաղթի հետ կապված կալանքի տակ քրեական պատիժը կրելուց հետո:

Հարկավոր է նաև հաշվի առնել քաղաքացիություն չունեցող անձանց կալանավորմանն առնչվող քաղաքականությունն ու պրակտիկան, ինչպես նաև նման անհատների համար առկա կալանավորման այլընտրանքները.

- ✓ Քաղաքացիություն չունեցող անձանց՝ կալանքի մեջ գտնվելու դեպքեր հայտնի՞ են:
- ✓ Քաղաքացիություն չունեցող անձանց՝ կալանքից ազատվելու դեպքեր հայտնի՞ են:
- ✓ Եթե այո, անձը ճանաչվե՞լ է որպես քաղաքացիություն չունեցող անձ իրավասու մարմնի միջոցով, և դրանից հետո նա ստացե՞լ է երկրում մնալու իրավունք: Ինչպե՞ս են իշխանությունները ապահովել հետագա կալանավորումից խուսափումը:
- ✓ Որո՞նք են օրենքում կամ քաղաքականության մեջ առկա կալանավորման այլընտրանքները, և որո՞նք են կիրառվում գործնականում:

[23] Որպեսզի գործի, կալանավորումը բողոքարկելու իրավունքին պետք է նախորդի այդ իրավունքի մասին տեղեկատվությունը: Դատական վերանայումը պետք է ենթադրի բանավոր լսում, որի ժամանակ կտրամադրվի անվճար իրավաբանական օգնություն, ինչպես որ այն հասանելի է նույն իրավիճակում գտնվող քաղաքացիների համար: Անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի անվճար լեզվական աջակցություն:

- ✓ Երկրի կողմից կալանավորման որևէ կոնկրետ այլընտրանքներ սահմանվա՞ծ են քաղաքացիություն չունեցող անձանց համար: (Դա կարող է ներառել, օրինակ, հատուկ վիզայի կամ զեկուցման պահանջները:) Եթե ոչ, իշխանությունները պատրաստվո՞ւմ են դիտարկել նման այլընտրանքներ սահմանելու հնարավորությունը:

Կալանավորման այլընտրանքների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել՝

- ՄԱԿ ՓԳՀ, *Տարբերակների մասին փաստաթուղթ 1՝ Երեխաների և ընտանիքների համար խնամքի կազմակերպման և կալանավորման այլընտրանքների տարբերակներ կառավարությունների համար*;
- ՄԱԿ ՓԳՀ, *Տարբերակների մասին փաստաթուղթ 2՝ Բաց ընդունելության և կալանավորման այլընտրանքների տարբերակներ կառավարությունների համար*;
- ՄԱԿ ՓԳՀ Գերագույն հանձնակատարի Ծրագրերի մշտական հանձնաժողովի գործադիր կոմիտե, *Կալանավորման այլընտրանքներ*, EC/66/SC/CRP.12[24]:

Այցելության ընթացքում

Ա. Ստուգել կալանավորման մատյանները

Համապատասխան տեղեկություններ կարելի ստանալ մատյանների միջոցով, եթե թույլատրվում է դրանցից օգտվել, մասնավորապես՝ կալանավորվածների մուտքի և ելքի գրանցման մատյանների, եթե այդպիսիք գոյություն ունեն: Հարկավոր է հաշվի առնել ներգաղթային կարգավիճակի (այդ թվում՝ ընթացքի մեջ գտնվող ապաստանի հայցը կամ հեռացման մասին հրամանները), կալանավորվածների ծագման երկրի և քաղաքացիության կարգավիճակի մասին տեղեկությունները:

Այնուհետև կարելի է իրականացնել գնահատում այն մասին, թե արդյոք հայտնի է, որ ծագման երկրներում կա քաղաքացիություն չունեցող բնակչություն: Առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացվի նրանց, ովքեր նշված են որպես, օրինակ, «անհայտ քաղաքացիություն», «չորոշված քաղաքացիություն» և «հաստատվելիք քաղաքացիություն» ունեցող, կամ նրանց, ովքեր ընգրկված են քաղաքացիություն չունեցող անձանց առանձնահատուկ խմբերի համար նախատեսված հատուկ նշումներով ցուցակներում:

[24] Տես UNHCR Executive Committee of the High Commissioner's Programme Standing Committee, Alternatives to detention, EC/66/SC/CRP.12, June 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/pdfid/58638ecf4.pdf:

Կալանավորման մատյանների կամ ցանկացած այլ աղբյուրների հիման վրա հարկավոր է առանձնացնել՝

- ✓ Անձանց, որոնց քաղաքացիությունն անորոշ է կամ վիճարկելի:
- ✓ **Անձանց, ովքեր պնդում են, որ քաղաքացիություն չունեն**:
- ✓ **Անձանց, ովքեր մի խմբի անդամ են, որը հայտնի է որպես քաղաքացիություն չունեցող:**
- ✓ Աձանց, ովքեր կալանքի մեջ են գտնվում ավելի երկար ժամանակ, քան այդ կալանավայրին հատուկ միջին ժամկետը:
- ✓ **Անձանց, ովքեր միջինից ավելի երկար ժամանակահատված են գտնվում հեռացման վարույթում**:
- ✓ Անձանց, ովքեր նախկինում կալանավորվել և բաց են թողնվել և այժմ ենթակա են հետագա կալանքի:

Բ. Քննարկել իշխանությունների հետ[25]

Եթե կալանավորման հիմք չկա, քաղաքացիություն չունեցող անձինք պետք է ազատ արձակվեն:

- ✓ Անձանց ի՞նչ խմբեր են կալանավորվում (ապաստան հայցողներ, փախստականներ, ապաստանի համակարգից դուրս գտնվող անկանոն միգրանտներ, վերադարձի վարույթում գտնվող անձինք և այլն):
- ✓ Ո՞րն է ինչ-որ մեկի քաղաքացիությունը կամ ծագման երկիրը կալանքի մատյանում գրանցելու հիմքը, հատկապես՝ այն դեպքերում, երբ խնդրո առարկա անհատը չունի փաստաթղթեր: Անձի քաղաքացիությունը գրանցվում է անձի պնդմա՞ն, թե՞ իշխանությունների գնահատման հիման վրա:
- ✓ Յուրաքանչյուր անձի կալանքի տևողությունը արձանագրվո՞ւմ է, և եթե այո, ապա ինչպե՞ս:
- ✓ Ի՞նչ մեխանիզմներ գոյություն ունեն հավաստիանալու համար, որ կալանքի տևողությունը չի գերազանցում առավելագույն ժամկետը (եթե նման ժամկետ սահմանված է օրենքով) կամ պատշաճ կերպով երկարաձգված չէ:
- ✓ Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում, երբ լրանում է/շուտով լրանալու է առավելագույն ժամկետը:
- ✓ **Արդյո՞ք որոշ անձինք կալանավորվել են զգալիորեն ավելի երկար ժամանակով, քան մյուսները: Եթե այո, ինչո՞ւ:**
- ✓ **Արդյո՞ք կան անձինք, ում ինքնությունը և/կամ քաղաքացիությունը հաստատել իշխանությունները դժվարանում են:**

[25] Այս համատեքստում համապատասխան մարմիններն են կալանքի կենտրոնների տնօրինությունը, դատական և ներգաղթային մարմինների անդամները, ապաստանի հարցերով զբաղվող մարմինները, վերադարձի համար պատասխանատու մարմինները և այլն:

- ✓ **Արդյո՞ք կան անձինք, ում վերադարձը/հեռացումը կազմակերպելու հարցում կան դժվարություններ**, օրինակ՝ ճամփորդական փաստաթուղթ ձեռք բերելու դժվարությունների կամ համապատասխան հյուպատոսարանի կողմից չհամագործակցելու պատճառով:
- ✓ Արդյո՞ք կան անձինք, ում ազատ արձակումը մերժվել է փաստաթղթերի բացակայության կամ չհաստատված ինքնության և/կամ քաղաքացիության պատճառով:
- ✓ Արդյո՞ք կարելի է ձեռք բերել այդ անձանց ֆայլերից և փաստաթղթերից հասանելիության հնարավորություն (կալանավորվածների հստակ համաձայնությամբ):
- ✓ Արդյո՞ք նրանք ստացել են տեղեկատվություն կամ վերապատրաստում կալանավորման համատեքստում ապաքաղաքացիությանն առնչվող հարցերի վերաբերյալ:
- ✓ Արդյո՞ք կարելի է որպես քաղաքացիություն չունեցող ճանաչված անձանց նկատմամբ կիրառել կալանավորման այլընտրանքներ: Եթե ոչ, արդյո՞ք իշխանությունները դիտարկելու են դա անելու հնարավորությունը հետագայում:
- ✓ Ի՞նչ մեխանիզմներ գոյություն ունեն հավաստիանալու համար, որ որպես քաղաքացիություն չունեցող ճանաչված անձինք ազատ են արձակվում:
- ✓ Արդյո՞ք այն անձինք, ում համար սկսվել/ընթացքի մեջ է ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ, կարող են ազատ արձակվել, կամ, եթե անհատապես նրանց դեպքում կան կալանավորման հիմքեր, արդյո՞ք այդ անձանց նկատմամբ կարելի է կիրառել կալանավորման այլընտրանքներ: Եթե ոչ, արդյո՞ք իշխանությունները դիտարկելու են դա անելու հնարավորությունը հետագայում:

Կալանքի մեջ ծնված երեխաների դեպքում

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ երեխան պետք է գրանցում ստանա անմիջապես ծննդից հետո և ունենա քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք: Անդամ պետությունները պետք է երաշխավորեն այդ իրավունքների իրականացումը, մասնավորապես՝ եթե երեխան հակառակ դեպքում լինելու է քաղաքացիություն չունեցող:

Ծննդի գրանցումը, որպես կանոն, ինքն իրենով քաղաքացիություն չի շնորհում երեխային: Ծնունդների գրանցման գործընթացը առանձին է այն գործընթացից, որով անհատները ձեռք են բերում քաղաքացիություն: Ծննդի գրանցումը, այնուամենայնիվ, կարևոր է ապաքաղաքացիության կանխման համար, քանի որ

այն օրինական կերպով արձանագրում է, թե որտեղ է ծնվել երեխան, և ովքեր են նրա ծնողները:

Հետևաբար կարևոր է ստուգել հետևյալը.

- Ո՞րն է ապաստան հայցողներից, փախստականներից և քաղաքացիություն չունեցող անձանցից տվյալ երկրում ծնված երեխաների ծննդի գրանցման ընթացակարգն ու պրակտիկան:
- Ո՞րն է կալանավորված մայրերից ծնված երեխաների ծննդի գրանցման ընթացակարգն ու պրակտիկան:
- Վերջին տարվա ընթացքում կալանավորված մայրերից քանի՞ երեխա է ծնվել: Կալանքի վայրում քանի՞ հղի կին է կալանավորված:
- Կալանավորված մայրերից ծնված երեխաների ծնունդները գրանցվե՞լ են, և երեխաները ստացե՞լ են ծննդյան վկայական: Եթե ոչ, ինչո՞ւ: Կա՞ն ֆինանսական խոչընդոտներ ծննդի գրանցման և ծննդյան վկայականների տրման ճանապարհին որոշ (չքավոր) կամ բոլոր դիմողների համար:
- Այն դեպքում, երբ չի տրվում ծննդյան վկայական, մանկաբարձուհու կամ հիվանդանոցի կողմից ծննդի մասին որևէ թուղթ տրվո՞ւմ է:
- Անձն աջակցության կարիք ունի՞ երեխայի ծնունդը գրանցելու հարցում:

Գ. Քննարկել կալանավորվածի հետ

Հարցազրույցի ընթացքում անհատներից տեղեկատվության հավաքագրումը պահանջում է կալանավորվածի տեղեկացված և հստակ թույլտվությունը[26]: Նա պետք է տեղեկացվի հարցազրույցի կոնկրետ նպատակի մասին, թե ինչպես է այն անցկացվելու, և արդյոք տեղեկատվությունը տրամադրվելու է երրորդ կողմերին: Սկզբունքորեն անձնական տվյալներին պետք է վերաբերվել որպես խիստ գաղտնի, և դրանք պետք է միայն տրամադրվեն գործընկերներին կամ երրորդ կողմերին կոնկրետ նպատակով, ինչպես նաև այն պայմաններով, որոնց համաձայնվել է և որոնց վերաբերյալ հստակ թույլտվություն է տվել հարցազրույց տվողը[27]:

---

[26] Գաղտնիության սկզբունքի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես Para. 4.1 of the Policy on the Protection of Personal Data of Persons of Concern to UNHCR, May 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/55643c1d4.html:

[27] Ինչևէ, պետք է նշել, որ կան բացառիկ հանգամանքներ, որոնք հիմնականում կապված են ՄԱԿ ՓԳՀ կամ այլոց խնդրո առարկա անձանց ապահովության և անվտանգության հետ, երբ անհատի համաձայնությունը պարտադիր չէ: Տես Para. 2.2 and 6.3.2 of the Policy on the Protection of Personal Data of Persons of Concern to UNHCR: Նման դեպքերում խորհուրդ է տրվում լրացուցիչ խորհրդակցել ՄԱԿ ՓԳՀ-ի գլխավոր շտաբի հետ:

Հարցումն այն մասին, թե արդյոք ինչ-որ մեկը քաղաքացիություն չունի, կարող է իրականացվել միայն այն պետությունների կողմից, որոնց հետ անձն ունի զգալի կապեր, մասնավորապես՝ կապված է այդ տարածքում ծնված լինելով, ժառանգությամբ, ամուսնությամբ, որդեգրմամբ կամ մշտական բնակությամբ: Որոշ դեպքերում սա կարող է միայն մեկ պետության թույլ տալ հետաքննություն իրականացնել[28]: Այլ դեպքերում սա նշանակում է մի քանի երկրների հետ կապերի քննություն: Ստորև ներկայացված հարցերը կօգնեն պարզելու բոլոր հնարավոր կապերը:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

- ✓ **Նա ունի՞ կամ նախկինում ունեցե՞լ է մեկ կամ մեկից ավել քաղաքացիություն:**
- ✓ Եթե կան կասկածներ, նրա կարծիքով նա ի՞նչ քաղաքացիություն ունի կամ պետք է ունենա:
- ✓ **Որտե՞ղ է նա ծնվել:**
- ✓ **Ի՞նչ էթնիկական խմբի է նա պատկանում:**
- ✓ **Ի՞նչ երկրի/երկրների քաղաքացիություն են ունեցել նրա ծնողները և ծնողների ծնողները:** Որտե՞ղ և ե՞րբ են ծնվել նրա ծնողները:
- ✓ Ի՞նչ քաղաքացիություն ունեն նրա եղբայրները/քույրերը (եթե ունի քույր կամ եղբայր):
- ✓ Ինչ քաղաքացիություն ունեն նրա (նախկին) ամուսինը/զուգընկերը և երեխաները:
- ✓ Արդյո՞ք նա կորցրել կամ զրկվել է իր քաղաքացիությունից: Եթե այո, ի՞նչ հիմքով: Խնդրե՛ք բացատրել հանգամանքները:
- ✓ Արդյո՞ք նա փորձել է ստանալ որևէ կոնկրետ երկրի քաղաքացիություն: Ի՞նչ մարմինների է նա դիմել, որտե՞ղ և ե՞րբ: Ինչո՞վ են ավարտվել այդ քայլերը:
- ✓ Արդյո՞ք նա հրաժարվել է որևէ երկրի քաղաքացիությունից, և արդյո՞ք առկա է այդ գործընթացի փաստական ապացույց:

Փաստաթղթավորված չլինելը, օրինակ՝ անձնագիր կամ ինքնությունը հաստատող փաստաթղթեր չունենալը, նույնը չէ, ինչ չունենալ քաղաքացիություն: Ինչևէ, քաղաքացիություն չունեցող անձանց մեծ մասը չունի քաղաքացիությունը հավաստող որևէ տեսակի փաստաթուղթ:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ✓ **Նա ունի՞ վավերական կամ վավերականության ժամկետը լրացած՝ ինքնությունը հաստատող փաստաթուղթ** (անձնագիր, նույնականացման քարտ, բնակության թույլտվություն և այլն) կամ կարո՞ղ է տալ մեկի անունը, ում մոտ առկա է իր վավերական կամ վավերականության ժամկետը լրացած՝

[28] Տես UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 18:

ինքնությունը հաստատող փաստաթղթերի կրկնօրինակը, և արդյո՞ք նա կանոնավոր կապ է պահպանում այդ անձի հետ:

- ✓ Եթե նա ամուսնացած է, ունի՞ արդյոք ամուսնության վկայական: Եթե ոչ, ինչո՞ւ, և ինչպե՞ս կարելի է այն ձեռք բերել:
- ✓ Նա ունի՞ պետական կամ հոգևոր իշխանության կողմից տրված ծննդյան վկայական: Եթե ոչ, ինչո՞ւ: Նա ծնվել է առողջության կենտրոնո՞ւմ, հիվանդանոցո՞ւմ, տա՞նը, թե՞ որևէ այլ տեղ: Կարելի՞ է ձեռք բերել ծննդյան վկայական: Եթե ծնունդը տեղի է ունեցել առողջության կենտրոնում կամ հիվանդանոցում, այդ մասին կա՞ գրավոր արձանագրություն՝ արված այդ հաստատությունների կողմից, կամ կարելի՞ է այն ձեռք բերել:
- ✓ Անունը և ծննդյան ամսաթիվը ճշգրիտ կերպով նշվա՞ծ են ծննդյան վկայականում և ինքնությունը հաստատող փաստաթղթերում:
- ✓ Նա փոխե՞լ է անունը, և այդ փոփոխության մասին նշվե՞լ է նրա ծննդյան վկայականում/ինքնությունը հաստատող փաստաթղթերում:
- ✓ **Նա փորձե՞լ է ինքնությունը հաստատող փաստաթղթեր ստանալ որևէ երկրից:** Ի՞նչ մարմինների է դիմել, որտե՞ղ և ե՞րբ: **Ի՞նչ արդյունքների են հանգեցրել այդ քայլերը**:
- ✓ Նա ունի՞ իրեն կալանավորած երկրի կողմից տրված փաստաթղթեր, որոնցում նշված է, որ նա չի համարվում այդ երկրի քաղաքացի[29]:
- ✓ Նա ունի՞ այլ երկրների իշխանությունների կողմից տրված փաստաթղթեր, որոնցում նշված է, որ նա չի համարվում այդ երկրների քաղաքացի:
- ✓ Որևէ փաստաբան, կազմակերպություն, ընկեր կամ այլ դերակատար երբևէ օգնե՞լ է նրան ստանալու քաղաքացիական գրանցում կամ ինքնությունը հաստատող փաստաթղթեր: Ո՞վ, ե՞րբ և որտե՞ղ: Ի՞նչ արդյունքների են հանգեցրել այդ քայլերը:
- ✓ Նա երբևէ սովորե՞լ է դպրոցում կամ համալսարանում: Եթե այո, որտե՞ղ և ե՞րբ: Նա կարողացե՞լ է ստանալ ավարտական վկայական:
- ✓ Նա ունի՞ բժշկական պատմություն (պատվաստման մասին նշում, հղի կնոջ նախածննդյան վերահսկողության հաշվառման գրքույկ և այլն):
- ✓ Նա աշխատե՞լ կամ զինվորական ծառայություն անցե՞լ է նախկին բնակության որևէ երկրում կամ այն երկրում, որտեղ այժմ գտնվում է: Կա՞ որևէ փաստական ապացույց:

ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

[29] Իրավասու մասրմինների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես Para. 27-44 of the Handbook on Protection of Stateless Persons:

- ✓ Եթե կիրառելի է, որքա՞ն ժամանակ է նա ապրել ծննդի/ծագման/քաղաքացիության երկրից դուրս:
- ✓ Որքա՞ն ժամանակ է նա բնակվել այդ երկրում և նախկին բնակության երկրներում:
- ✓ Նա ունի՞ փաստաթղթեր, որոնք ապացուցում են այդ երկրներում բնակվելու հանգամանքը:
- ✓ Ե՞րբ և ինչպե՞ս է նա մուտք գործել այն երկիր, որտեղ այժմ կալանավորված է:
- ✓ Նա այլ երկրում ապաստանի կամ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի համար դիմում ներկայացրե՞լ է: Եթե այո, ո՞ր երկրում և ե՞րբ:

ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ ԱՊԱՍՏԱՆԻ, ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

- ✓ **Նա ապաստանի դիմում ներկայացրե՞լ է այն երկրում, որտեղ կալանավորվել է:** Եթե այո, ի՞նչ արդյունքի է հասել, կամ արդյո՞ք այն դեռ ընթացքի մեջ է:
- ✓ **Այն դեպքերում, երբ գոյություն ունի ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ, նա օգտվե՞լ է դրանից:** Ի՞նչ արդյունք է գրանցվել, կամ արդյո՞ք այն դեռ ընթացքի մեջ է:
- ✓ Նա փորձե՞լ է կանոնակարգել իր կացությունը այլ ընթացակարգերի միջոցով: Եթե այո, ի՞նչ ընթացկարգերի, և ի՞նչ արդյունք է գրանցվել, կամ արդյո՞ք այն դեռ ընթացքի մեջ է:
- ✓ Նա ներկայումս ստանո՞ւմ կամ երբևէ ստացե՞լ է Միավորված ազգերի կազմակերպության որևէ գործակալության կամ կազմակերպության պաշտպանությունը կամ աջակցությունը, բացի ՄԱԿ ՓԳՀ-ից: Եթե այո, ո՞ր կազմակերպության:
- ✓ Նրա վերաբերյալ առկա՞ է հեռացման վարույթ:

ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ. ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

- ✓ **Նա նախկինում կալանավորվե՞լ է: Եթե այո, ինչքա՞ն ժամանակով և որտե՞ղ: Ի՞նչ պատճառներով:**
- ✓ Նա միայնա՞կ է կալանավորված, թե՞ ընտանիքի անդամների հետ միասին:
- ✓ Նա ներկայումս բաժանվա՞ծ է իր անմիջական ընտանիքի անդամներից, ովքեր գտնվում են տվյալ երկրում կամ այլ երկրում:
- ✓ Նա ի վիճակի՞ է կանոնավոր կապ պահել (այդ թվում՝ հնարավորության դեպքում հեռախոսի կամ համացանցի միջոցով), և նրան կարո՞ղ են այցելել

բարեկամները, ընկերները, ինչպես նաև կրոնական, միջազգային և/կամ հասարակական կազմակերպությունները:

- ✓ Եթե հայտնի է, որո՞նք են նրան կալանավորելու հիմքերը: Նա ստացե՞լ է կալանավորման մասին նախնական որոշման անհատականացված պատճառները՝ շարադրված գրավոր կերպով: Կարո՞ղ է նա ցույց տալ այդ փաստաթուղթը:
- ✓ Նա լսվելու հնարավորություն ունեցե՞լ է, նախքան կալանավորման մասին որոշման կայացումը, մասնավորապես՝ կապված իր ինքնությունը, ծագման երկիրը/քաղաքացիությունը հաստատելու և փաստաթղթերի բացակայության հետ:
- ✓ Վարույթի ընթացքում բանավոր թարգմանություն տրամադրվե՞լ է: Եթե այո, ո՞ր լեզվով:
- ✓ Կալանավորման վերանայման գործընթացի մասին նրա համար հասկանալի լեզվով տեղեկատվություն տրամադրվե՞լ է:
- ✓ Կալանավորման մասին որոշումը վերանայվե՞լ է: Եթե այո, ո՞ր մարմնի կողմից: Ե՞րբ է տեղի ունեցել վերջին լսումը: Կարողացե՞լ է նա կամ նրա ներկայացուցիչը ներկա գտնվել լսմանը: Ի՞նչ հաճախականությամբ է վերանայվում կալանավորման մասին որոշումը: Որոշումը հիմնավորվա՞ծ է եղել: Դրանում որևէ նշում կա՞ քաղաքացիության վերջնական բացակայության մասին:
- ✓ Կարո՞ղ է նա խնդրել, որ իրեն ուղղորդեն դեպի երկրում գործող ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ:
- ✓ Վերանայման ժամանակ նա հնարավորություն ունեցե՞լ է ներկայացնելու իր ինքնությանը և քաղաքացիության հնարավոր բացակայությանն առնչվող տարրեր և բացատրելու փաստաթղթերի բացակայությունը:
- ✓ Եթե առկա է կալանավորման հիմք, կալանավորման համապատասխան այլընտրանքներ կիրառելի՞ կլինեին նրա դեպքում: Այդ այլընտրանքները դիտարկվե՞լ են կալանավորման վերանայման ընթացքում:
- ✓ **Նա օգտվե՞լ է օրինական ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից կալանավորման գործընթացում**: Եթե այո, նա հոժա՞ր է տրամադրելու իր փաստաբանի կոնտակտային տվյալները: Ո՞ր լեզվով է նա հաղորդակցվել նրա հետ:

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ԹՈՓ 10 ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ ԿԱԼԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ

1 – Նա ունի՞ կամ նախկինում ունեցե՞լ է մեկ կամ մեկից ավել քաղաքացիություն:

2 – Որտե՞ղ է նա ծնվել:

3 – Նա պատկանո՞ւմ է որոշակի խմբի, որը հայտնի է որպես քաղաքացիություն չունեցող:

4 – Ի՞նչ քաղաքացիություն են ունեցել նրա ծնողները և ծնողների ծնողները:

5 – Նա ունի՞ վավերական կամ վավերականության ժամկետը լրացած որևէ փաստաթուղթ:

6 – Նա փորձե՞լ է որևէ երկրից ստանալ ինքնությունը հաստատող փաստաթղթեր:

7 – Նա ապաստանի հայց ներկայացրե՞լ է այն երկրում, որտեղ կալանավորված է:

8 – Եթե գոյություն ունի ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ, նա օգտվե՞լ է դրանից:

9 – Նա նախկինում կալանավորվե՞լ է: Եթե այո, որքա՞ն ժամանակով և որտե՞ղ: Ի՞նչ պատճառներով:

10 – Նա օգտվե՞լ է օրինական ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից կալանքի գործընթացի ընթացքում:

IV. ՀԵՏԱԳԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՆ ԱՅՑԵԼԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՁԵՌՆԱՐԿՎԵԼԻՔ ՔԱՅԼԵՐ

Հետևյալ քայլերը կարող են օգնել ստուգելու, թե արդյոք կալանավորված անձինք քաղաքացիություն չունեցող անձինք են, և բերել փաստարկներ նրանց ազատ արձակելու համար: Գաղտնիության վերաբերյալ պահանջները պետք է խրախուսվեն այդ գործընթացի ընթացքում, և պետք է ձեռք բերվի անհատի համաձայնությունը երրորդ կողմերին, այդ թվում՝ ընդունող պետության իշխանություններին տեղեկատվություն հայտնելու վերաբերյալ, նախքան ՄԱԿ ՓԳՀ-ից դուրս որևէ տեղեկություն տարածելը:

Որևէ մեկի քաղաքացիությունը գնահատելու համար կարող է անհրաժեշտ լինել կապվել նրա ծագման երկրի կամ որևէ այլ երկրի իշխանությունների հետ, որի հետ

տվյալ անձը կապեր ունի: Փախստականի կամ ապաստան հայցողի ինքնության մասին չպետք է հայտնել այդ անհատի ծագման երկրի իշխանություններին:

ՄԱԿ ՓԳՀ, Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության մասին ուղեցույց, պարբերություն 78-82

Ստուգել հնարավոր ապաքաղաքացիությունը կամ քաղաքացիությունը

Գուցե հնարավոր չլինի միանշանակ որոշել, թե արդյոք անձը քաղաքացիություն չունի, սակայն ապաքաղաքացիության վերաբերյալ եզրակացությունը երաշխավորված է այն դեպքում, երբ «բավարար չափով» հաստատվում է, որ անհատը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ համաձայն վերջինիս գործող օրենսդրության[30]:

- ✓ Ստուգել քաղաքացիությանն առնչվող օրենքները և, որքանով հնարավոր է, այն տարբեր երկրների օրենքների կատարումը, որոնց հետ տվյալ անձը կապեր ունի: Դրանք են ծննդյան երկիրը, նրա ծնողների և (նախկին) ամուսնու քաղաքացիության երկիրը/երկրները և (նախկին) երկարաժամկետ բնակության երկիրը/երկրները:
- ✓ Հավանականությո՞ւն կա, որ անձը ծննդի փաստի հիման վրա կամ իր ծնողների միջոցով որևէ երկրի տարածքում ստացել է քաղաքացիություն:
- ✓ Ստուգել, թե արդյոք քաղաքացիության երկրից դուրս երկարատև բնակությունը կարող էր հանգեցնել քաղաքացիության կորստի:
- ✓ Դիտարկել փաստաբանների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիության երկրում գտնվող՝ ՄԱԿ ՓԳՀ գրասենյակի հետ կապվելու հնարավորությունը՝ տալով լրացուցիչ մանրակրկիտ հարցեր և խորհուրդ հարցնելով այն մասին, թե ինչպես ձեռք բերել ինքնությունը հաստատող փաստաթղթեր և/կամ ստանալ կամ հաստատել քաղաքացիությունը:
- ✓ Դիտարկել հնարավոր քաղաքացիության երկրի իրավասու մարմինների հետ կապվելու հնարավորությունը խնդրո առարկա անձի ինքնությունը և/կամ քաղաքացիությունը ստուգելու նպատակով[31]:

Բողոքարկել կալանավորման մասին որոշումը

ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

- ✓ Առկա են կալանավորման մե՞կ, թե՞ ավելի հիմքեր, և այդ մասին հստակորեն նշվա՞ծ է կալանավորման մասին որոշման մեջ:

[30] Տես UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 91 – 93:
[31] Տես UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 26 – 56:

- ✓ Այդ հիմքերը համապատասխանո՞ւմ են ՄԱԿ ՓԳՀ-ի *Կալանավորման ուղեցույց կանոններին*[32]:
- ✓ Այդ հիմքերը բավարար չափով հիմնավորվա՞ծ են:

ԱՅՆ ՓԱՍՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ՈՐ ՆԱԽԱՊԵՍ ՉԵՆ ԴԻՏԱՐԿՎԵԼ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

- ✓ Կալանավորման այլընտրանքներ ակտիվորեն դիտարկվե՞լ են, երբ կայացվում էր կալանավորման մասին որոշումը:
- ✓ **Խոցելիության անհատական գնահատում** իրականացվե՞լ է, որի վրա պետք է հիմնված լիներ տեղավորման/կալանավորման մասին որոշումը:
- ✓ Կալանավորման հրամանը հիմնավորո՞ւմ է, թե ինչու որևէ այլընտրանքային միջոց չի կիրառվել: Դա կապված է եղել փաստաթղթերի բացակայությա՞ն հետ:
- ✓ Առկա՞ են կալանավորման այլընտրանքներ, որոնք օրինական ներկայացուցիչը կարող է առաջ քաշել կալանավորման հաջորդ վերանայման ժամանակ (ինչպես օրինակ՝ երաշխավորի տրամադրում, պարտականությունների ներկայացում):

ՀԵՌԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

- ✓ Այն դեպքում, երբ անձը ստացել է հեռացման, վերադարձի, արտաքսման կամ վտարման մասին հրաման, ո՞րն է այն երկիրը, ուր նախատեսված է, որ անձը պետք է գնա:
- ✓ Նա փորձե՞լ է ստանալ իշխանությունների, Միգրացիայի միջազգային կազմակերպության, փաստաբանի կամ այլոց օգնությունը՝ վերադառնալու իր վերադարձի երկիր:
- ✓ Տվյալ վարույթի համար պատասխանատու ներգաղթային մարմինները կապվե՞լ են ծագման/վերադարձի երկրի համապատասխան մարմինների հետ, որպեսզի ստանան անհրաժեշտ փաստաթղթերը: Ե՞րբ է այդ գործընթացը սկսվել: Ի՞նչ ելք է ունեցել:
- ✓ Կարո՞ղ է խնդրո առարկա անձը բողոքարկել կալանավորումը այն հիմքով, որ չկան վերադարձի/հեռացման հնարավորություններ:
- ✓ Կարո՞ղ է խնդրո առարկա անձը բողոքարկել վերադարձի/հեռացման մասին հրամանը:

[32] Տես UNHCR Detention Guidelines, Para. 18 – 33:

- ✓ Կալանավորման մասին որոշումը և/կամ վերադարձի/հեռացման մասին հրամանը բողոքարկել պատրաստվելիս մտածեք համապատասխան ազգային և տարածաշրջանային օրենսդրությանը հղում կատարելու մասին[33]:

ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՉ ԽԵԼԱՄԻՏ ԵՐԿԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏԻ ՎՐԱ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

- ✓ Անհատի գործով սահմանել կալանավորման ժամկետը և այն համեմատել մյուսների համար սահմանված կալանքի միջին տևողության հետ:
- ✓ Դիտարկել անձի կալանավորումը բողոքարկելու հնարավորությունը այն հիմքով, որ չկա կալանքի առավելագույն ժամկետի սահմանափակում, կամ որ օրենքով սահմանված առավելագույն ժամկետը չի պահվել է[34]:
- ✓ Առկա գրականության և հնարավորության դեպքում բժշկական փորձագետի կամ հոգեբանի ներկայացրած զեկույցի հիման վրա ցույց տալ անձի հոգեկան և/կամ ֆիզիկական վիճակի վատթարացումը և հրատապ ազատ արձակման կամ կալանավորման այլընտրանքի կիրառման անհրաժեշտությունը[35]:

Աջակցել ազատ արձակմանը հաջորդող լուծմանը

ՀԵՇՏԱՑՆԵԼ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

- ✓ Եթե արդեն սկսվել է ապաքաղաքացիության որոշման կամ այլ ներգաղթային կամ կանոնակարգման ընթացակարգ, ապահովել, որ այդ գործընթացը չհետաձգվի կալանքի ժամանակահատվածում:
- ✓ Եթե ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ չի սկսվել, աջակցել կամ ուղղորդել իրավաբանական օգնություն տրամադրողի մոտ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ կամ այլ ներգաղթային կամ կանոնակարգման ընթացակարգ սկսելու հնարավորությունը դիտարկելու

[33] Տես European Network on Statelessness, Protecting stateless persons from arbitrary detention – A regional toolkit for practitioners, 2015, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://goo.gl/Jr258f:
[34] Տես UNHCR Detention Guidelines, Guideline 3, Para. 17: Եթե դեռևս օրենքով սահմանված չէ ժամանակային սահմանափակում, կարելի է նաև հղում կատարել նախադեպային իրավունքին:
[35] Տես Jesuit Refugee Service, Europe: Becoming Vulnerable in Detention, June 2011, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/4ec269f62.html:

նպատակով[36], որը կարող է լուծում առաջարկել: Կապվել կալանավորման համար պատասխանատու մարմինների հետ՝ ապահովելու, որ անձը ներկա լինի հարցազրույցներին, և որ ընթացակարգը հետաձգող ազդեցություն ունենա հեռացման մասին հրամանի վրա:

- ✓ Եթե չի գործում ապաքաղաքացիության որոշման ընթացակարգ, իշխանությունները թույլ կտա՞ն, որ Կառավարության անունից այդ գործընթացն իրականացնի ՄԱԿ ՓԳՀ-ն:
- ✓ Կալանքից ազատ արձակվելուն պես հավաստիանալ, որ նա ստացել է ինքնությունը հաստատող փաստաթուղթ և երկրում մնալու թույլտվություն՝ կրկնակի կալանավորումը կանխելու նպատակով:
- ✓ Եթե անձը ազատ արձակվելուց հետո շարունակում է մնալ անկակոն կարգավիճակում, աջակցել կամ ուղղորդել նրան իրավաբանական օգնություն տրամադրողի մոտ, ով կարող է օգնել նրան ապաքաղաքացիության որոշման կամ այլ հիմքերով կարգավիճակի կանոնակարգման մասին դիմում պատրաստելու հարցում:

ՀԵՇՏԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՉԵՌՔԲԵՐՈՒՄԸ/ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

- ✓ Վերլուծել այն երկրների՝ քաղաքացիությանն առնչվող օրենքներն ու պրակտիկան, որոնց հետ անձն ունի կապեր, գնահատելու համար, թե արդյոք անձը կարող էր ստանալ/ստացել է քաղաքացիություն:
- ✓ Վերլուծել քաղաքացիական գրանցմանը և ինքնությունն ու քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի տրմանն առնչվող իրավական դրույթները և պրակտիկան այդ երկրներում՝ գնահատելու համար, թե արդյոք այդ փաստաթղթերը ստանալու ճանապարհին որևէ խոչընդոտներ կան/եղել են:
- ✓ Հաշվի առնելով գաղտնիության վերաբերյալ պահանջները[37]՝ կապվել այն երկրների իրավասու մարմինների հետ, որոնց հետ անձն ունի համապատասխան կապեր, ստուգելու համար, թե արդյոք անձը կարող էր

[36] Ուստի պետք է այնպես անել, որ անձը պաշտոնական ծանուցում ստանա համապատասխան մարմնից, որպեսզի բաց չթողնի վերջնաժամկետները (օրինակ՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու կամ նշանակված հարցազրույցին հաճախելու):

[37] Որևէ հանգամանքներում չի կարելի կապ հաստատել այնպիսի պետության մարմինների հետ, որի կողմից հետապնդումների ենթարկվելու հիմնավոր երկյուղ ունի անձը, քանի դեռ հստակորեն չի եզրակացվել, որ նա ոչ փախստական է, ոչ էլ իրավասու է ստանալու պաշտպանության լրացուցիչ ձև: Սովորաբար պահանջվում է խնդրո առարկա անհատ(ներ)ի համաձայնությունը նման մարմիններին տվյալներ փոխանցելու համար:

ստանալ/վերականգնել քաղաքացիություն և ունենալ ինքնությունը հաստատող փաստաթղթեր[38]:

- ✓ Դիտարկել փաստաբանների, հասարակական կազմակերպությունների և հնարավոր քաղաքացիության երկրում ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակի հետ կապվելու հնարավորությունը՝ փաստաթղթեր և/կամ քաղաքացիություն ստանալու ընթացակարգերի վերաբերյալ խորհուրդ հարցնելու նպատակով:
- ✓ Եթե անձը հնարավորություն ունի ձեռք բերելու ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր բնակության երկրում կամ ծագման երկրում, աջակցել կամ դիմել իրավաբական օգնություն տրամադրողներին, ովքեր կարող են աջակցություն ցուցաբերել:

Սատարել փոփոխությունները օրենքում, քաղաքականության մեջ և պրակտիկայում

- ✓ Հայտնաբերել օրենքում, քաղաքականության մեջ և պրակտիկայում առկա կոնկրետ բացերը, որոնք հանգեցնում են քաղաքացիություն չունեցող անձանց կամայական, կրկնվող և/կամ երկարատև կալանավորման: Սատարել համապատասխան օրենքներում, քաղաքականության մեջ և պրակտիկայում փոփոխությունների կատարումը՝ կապված հայտնաբերված բացերի հետ (կալանավորման հիմքեր, կալանքի առավելագույն ժամկետ, անկախ և կանոնավոր վերանայումներ):
- ✓ Առանձնացնել այն պետական պաշտոնյաներին և օրենքներ նախագծողներին, ովքեր այնպիսի դիրք են զբաղեցնում, որ կարող են հետամուտ լինել քաղաքականության մեջ և օրենքներում փոփոխությունների կատարմանը: Սատարել իրավական բարեփոխումների իրականացումը, որի նպատակն է ապահովել օրենքով սահմանված այնընտրանքների առկայությունը և ակտիվորեն աջակցել դրանց գործնական կիարռությանը:
- ✓ Առանձնացնել գործընկեր կազմակերպություններին, իրավաբաններին և այլ շահառուներին, ովքեր կարող են աջակցել սատարման նախաձեռնություններին, որոնք ուղղված են քաղաքացիություն չունեցող անձանց կալանքից ազատելուն և ընդունելության համապատասխան տարբերակների ու կալանավորման համայնքահեն այլընտրանքների հաստատմանը:
- ✓ Դիտարկել ռազմավարական դատավարությունը ազգային և հնարավորության դեպքում տարածաշրջանային մակարդակում՝ բողոքարկելու քաղաքացիություն չունեցող անձանց կամայական կալանավորումը և

[38] Տես UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, Para. 26 – 56:

վերացնելու կանոնակարգման և փաստաթղթերի ձեռքբերման հետ կապված դժվարությունները: Երբ տեղին է, դիտարկել անօրինական կալանքի ժամանակահատվածի փոխհատուցում պահանջելու հնարավորությունը:

- ✓ Սատարել ապաքաղաքացիության որոշման հատուկ ընթացակարգերի ստեղծումը՝ ուղղված միգրացիոն համատեքստում քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչմանը[39], կամ որպեսզի ապաքաղաքացիության որոշումը Կառավարության անունից իրականացվի ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից:
- ✓ Սատարել ներգաղթային և քաղաքացիական կարգավիճակի փաստաթղթավորման համար պատասխանատու մարմինների կողմից գրանցման պրակտիկայում հստակ կարգերի կիրառությունը, որոնք թույլ են տալիս, որ քաղաքացիություն չունեցող անձինք գրանցվեն որպես այդպիսին:
- ✓ Իրականացնել տեղեկացվածության բարձրացմանն ուղղված գործողություններ, ինչպես օրինակ՝ ճեպազրույցներ և համապատասխան նյութերի թարգմանություն, կարողությունների կառուցման միջոցառումներ և վերապատրաստումներ ապաքաղաքացիությանն ու կալանավորմանն առնչվող միջազգային չափորոշիչների վերաբերյալ ներգաղթի և ապաստանի հարցերով զբաղվող մարմինների, ինչպես նաև իրավաբանների և դատական մարմինների համար:

ՀԵՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ապաքաղաքացիություն

- ՄԱԿ ՓԳՀ, Ապաքաղաքացիության խնդրի լուծմանն ուղղված գործողություն. Ռազմավարական փաստաթուղթ, 2010թ. մարտ // UNHCR, Action to Address Statelessness: A Strategy Note, March 2010, available at: http://www.refworld.org/docid/4b9e0c3d2.html

[39] Ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերը, որպես կանոն, օգնում են պետություններին կատարել 1954 թվականի Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները, մասնավորապես՝ կապված միգրացիայի համատեքստում քաղաքացիություն չունեցող անձանց հետ: Ապաքաղաքացիությունը կարող է առաջ գալ ինչպես միգրացիոն, այնպես էլ ոչ միգրացիոն համատեքստում, և ապաքաղաքացիության պատկերը կոնկրետ երկրում կարող է համապատասխանել այս կամ այն սցենարին կամ կարող է խառը լինել: Քաղաքացիություն չունեցող անձանց որոշ բնակչություններ ոչ միգրացիոն համատեքստում շարունակում են մնալ իրենց «սեփական երկրում» և կարող են կոչվել իրենց *սկզբնական բնակավայրում/in situ* ապրող բնակչություններ: Այս խմբերի համար քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստանալու նպատակով իրականացվող որոշման ընթացակարգերը տեղին չեն այս երկրների հետ նրանց վաղուց հաստատված կապերի պատճառով: Նրանց ապաքաղաքացիության որոշումը, այնուամենայնիվ, կարևոր գործոն է նրանց կալանավորման համատեքստում և արժանի է հատուկ ուշադրության կալանավորման մասին որոշման գնահատման ժամանակ:

- ՄԱԿ ՓԳՀ, Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների պաշտպանություն. Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների մասին 1954 թվականի կոնվենցիա, 2014թ. մարտ //UNHCR, Protecting the Rights of Stateless Persons: The 1954 Convention relating to the Status of Stateless Persons, March 2014, available at: http://www.refworld.org/docid/4cad88292.html
- ՄԱԿ ՓԳՀ, Ուղեցույց քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության մասին, 30 հունիսի 2014թ. // UNHCR, Handbook on Protection of Stateless Persons, 30 June 2014, available at: http://www.refworld.org/docid/53b676aa4.html
- ՄԱԿ ՓԳՀ, Ապաքաղաքացիության վերացմանն ուղղված գործողությունների համաշխարհային ծրագիր, 2014թ. նոյեմբեր // UNHCR, Global Action Plan to End Statelessness, November 2014, available at: http://www.refworld.org/docid/545b47d64.html

Կալանավորում

- ՄԱԿ ՓԳՀ, Ուղեցույց ապաստան հայցողների կալանավորմանն ու կալանավորման այլընտրանքներին առնչվող կիրառելի չափանիշների և չափորոշիչների մասին // UNHCR, Guidelines on the Applicable Criteria and Standards relating to the Detention of Asylum-Seekers and Alternatives to Detention, 2012, available at: http://www.refworld.org/docid/503489533b8.html
- ՄԱԿ ՓԳՀ, Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա և Կալանավորման հարցերով միջազգային կոալիցիա, Ներգաղթի հետ կապված կալանավորման մշտադիտարկում. գործնական ձեռնարկ // Association for the Prevention of Torture (APT) and the International Detention Coalition (IDC), Monitoring Immigration Detention: Practical Manual, 2014, available at: http://www.refworld.org/docid/53706e354.html
- ՄԱԿ ՓԳՀ, Կալանավորումից այն կողմ. ապաստան հայցողների և փախստականների կալանավորմանը վերջ դնելու հարցում կառավարություններին աջակցելու համաշխարհային ռազմավարություն 2014-2019թթ. // UNHCR, Beyond Detention: A Global Strategy to support governments to end the detention of asylum-seekers and refugees, 2014-2019, 2014, available at: http://www.refworld.org/docid/536b564d4.html
- ՄԱԿ ՓԳՀ, Տարբերակների մասին փաստաթուղթ 1. Երեխաների և ընտանիքների համար խնամքի կազմակերպման և կալանավորման այլընտրանքների տարբերակներ կառավարությունների համար // UNHCR, Options Paper 1: Options for governments on care arrangements and alternatives to detention for children and families, 2015, available at: http://www.refworld.org/docid/5523e8d94.html

- ՄԱԿ ՓԳՀ, Տարբերակների մասին փաստաթուղթ 2. Բաց ընդունելության և կալանավորման այլընտրանքների տարբերակներ կառավարությունների համար // UNHCR, Options Paper 2: Options for governments on open reception and alternatives to detention, 2015, available at: http://www.refworld.org/docid/5523e9024.html
- ՄԱԿ ՓԳՀ Գերագույն հանձնակատարի Ծրագրերի մշտական հանձնաժողովի գործադիր կոմիտե, Խորհրդակցային փաստաթուղթ կալանավորման այլընտրանքների մասին, EC/66/SC/ CRP.12, 3 հունիսի 2015թ. // UNHCR, Executive Committee of the High Commissioner's Programme Standing Committee, Conference Room Paper on Alternatives to detention, EC/66/SC/ CRP.12, 3 June 2015, available at: http://www.unhcr.org/559643e59.pdf
- ՄԱԿ ՓԳՀ, Երկրորդ համաշխարհային կլոր սեղան ընդունելության և կալանավորման այլընտրանքների մասին, 2015 թ. օգոստոս // UNHCR, Second Global Roundtable on Reception and Alternatives to Detention: Summary of deliberations, August 2015, available at: http://www.refworld.org/docid/55e8079f4.html
- ՄԱԿ ՓԳՀ, Կալանավորման մշտադիտարկման քաղաքականություն, 3 դեկտեմբերի 2015թ. // UNHCR, Policy on Detention Monitoring, 3 December 2015, available at: http://www.refworld.org/docid/564199b54.html
- ՄԱԿ ՓԳՀ և Կալանավորման հարցերով միջազգային կոալիցիա, Խոցելիության ստուգման գործիք – Խոցելիության հայտնաբերում և խնդրի լուծում. գործիք ապաստանի և միգրացիայի համակարգերի համար // UNHCR and International Detention Coalition (IDC), Vulnerability Screening Tool - Identifying and addressing vulnerability: a tool for asylum and migration systems, 2016, available at: http://www.refworld.org/docid/57f21f6b4.html
- ՄԱԿ ՓԳՀ, Առաջընթացի մասին զեկույց – 2016 թվականի կեսեր: Կալանավորումից այն կողմ. ապաստան հայցողների և փախստականների կալանավորմանը վերջ դնելու հարցում կառավարություններին աջակցելու համաշխարհային ռազմավարություն 2014-2019թթ., 2016 թ. օգոստոս // UNHCR, Progress Report mid-2016. Beyond Detention: A Global Strategy to support governments to end the detention of asylum-seeker and refugees, 2014-2019, August 2016, available at: http://www.refworld.org/docid/57b850dba.html
- ՄԱԿ ՓԳՀ, Ելակետային զեկույց – Կալանավորման իրավիճակը 2013 թվականի վերջին ամիսների դրությամբ: Կալանավորումից այն կողմ. ապաստան հայցողների և փախստականների կալանավորմանը վերջ դնելու հարցում կառավարություններին աջակցելու համաշխարհային ռազմավարություն 2014-2019թթ., 2016 թ. օգոստոս // UNHCR, Baseline Report - Detention situation as of end 2013. Beyond Detention: A Global Strategy to support governments to end the

detention of asylum-seeker and refugees, 2014-2019, August 2016, available at: http://www.refworld.org/docid/57b851874.html

- ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը միգրացիայի համատեքստում փախստական և գաղթական երեխաների կալանավորման վերաբերյալ, 2017թ. հունվար // UNHCR, UNHCR's position regarding the detention of refugee and migrant children in the migration context, January 2017, available at: http://www.refworld.org/docid/5885c2434.html

Ապաքաղաքացիություն և կալանավորում

- «Դի Իքուըլ Ռայթս Թրասթ», Ուղեցույց քաղաքացիություն չունեցող անձանց կամայական կալանավորումից պաշտպանելու մասին, 2012թ. հունիս // The Equal Rights Trust, Guidelines to Protect Stateless Persons from Arbitrary Detention, June 2012, available at http://goo.gl/IMJIJZ
- Ապաքաղաքացիության եվրոպական համակարգ, Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը կամայական կալանավորումից. Տարածաշրջանային գործիքներ գործող մասնագետների համար // European Network on Statelessness, Protecting stateless persons from arbitrary detention. A regional toolkit for Practitioners, 2015, available at: http://goo.gl/UpBU6N
- Ապաքաղաքացիության եվրոպական համակարգ, Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը կամայական կալանավորումից. Փոփոխությունների օրակարգ, 2017թ. մայիս // European Network on Statelessness, Protecting stateless persons from arbitrary detention. An agenda for change, May 2017, available at: http://www.statelessness.eu/protecting-stateless-persons-from-detention

#IBELONG / (Ես պատկանում եմ)

10 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՉՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Միացե՛ք ապաքաղաքացիության վերացմանն ուղղված մեր քարոզարշավին

www.unhcr.org/ibelong

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

UNITED COLORS OF BENETTON-ի հետ համագործակցությամբ

2014-2019

Կալանավորումից այն կողմ. ապաստան հայցողների և փախստականների կալանավորմանը վերջ դնելու հարցում կառավարություններին աջակցելու համաշխարհային ռազմավարություն

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

www.unhcr.org/detention

#IBELONG / (Ես պատկանում եմ)

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ